ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ԵՎ ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ (1791—1792 թթ.)

1990 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայ-ավստրիական ընկերության հրավերով գտնվելով Վիեննայում և ապրելով Մխիթարյան միաբանության վանքում, հնարավորություն ունեցա տեղականորեն աշխատելու միաբանության մատենադարանում և արխիվում։ Ի թիվս այլ արժեքավոր ձեռագիր նյութերի, իմ ուշադրությունը գրավեցին մատենադարանի 694-րդ համարի տակ պահվող չորս տասնյակ փաստաթղթերը, որոնք գլխավորապես հայ կաթողիկոսների և պատրիարքների կոնդակներ էին։ Դրանց մեջ էին նաև XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներ Հովսեփ Էմինի և ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի նամակները, որոնք մինչև հիմա ոչ միայն մնացել են անտիպ, այլև վրիպել են հայ ազատագրական շարժման պատմությունն ուսումնասիրող գիտնականների ուշադրությունից՝ չնայած դեռևս 1963 թ. 694 ձեռագրահամարի տակ պահվող բոլոր փաստաթղթերի հակիրճ նկարագրությունը հրապարակվել է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրացուցակում[1]։

Էմինը գրել է մի շարք հայերեն նամակներ, որոնցից մի քանիսը նա թարգմանել է անգլերեն և զետեղել իր ինքնակենսագրության մեջ։ Դրանցից ոչ մեկի բնագիրն առայժմ չի գտնված։ Նրա գրքի թարգմանության ժամանակ, բնականաբար, հայերեն են թարգմանվել նաև այդ նամակները (օրինակ՝ Լոնդոնից նրա նամակներն ուղարկված իր հորը՝ Հովսեփին և Հերակլ II վրաց թագավորին)[2]։

Ստորև հրատարակվող նամակները Հովսեփ Էմինի ձեռքով գրված ու մեզ հասած միակ հայերեն նամակներն են, որոնք, ցավոք, պահպանվել են ընդօրինակված ձևով։ Արտաքին կատարած պետք է լինի Հնդկաստան ուղարկված մխիթարյան վարդապետներից որևէ մեկը, որը հետո դրանք ուղարկել կամ բերել է Վիեննա։ Նրա ձեռքի տակ եղել են Էմինի նամակների սևագրությունները և Հ. Արղությանի նամակի բնագիրը։

Նամակները գրվել են 1791—1792 թթ.։ Հ. Արղությանը գրել է Պետերբուրգից 1791 թ. ապրիլի 4-ին (փաստաթուղթ № 1), իսկ Էմինը Կալկաթայից պատասխանել է նրան 1792 թ. հունվարի 1-ին (№ 2)։ Մի բանի օր դրանից առաջ՝ 1791 թ. դեկտեմբերի 24-ին նա նամակ էր գրել Հովհաննես Լազարյանին և հունվարի 1-ին լրացրել այն մի փոքրիկ հեռագրությամբ (№ 3)։

Հ. Էմինի և Հ. Արղությանի միջև գրագրության մասին տեղյակ է եղել «Դիվան հայոց պատմության» ժողովածուների հրատարակող Գյուտ քահանա Աղանյանցը։ Նա տպագրել է Հ. Արղությանի 1 ապրիլի 1791 թվակիր հետևյալ տողերը. «Էմին աղայն մեզ թղթեր էր գրեալ, պատասխան նորին ես գրեցաք ընդ սոյն թղթոյս»[3]։

Ակադ. Արգար Հովհաննիսյանը, հանգամանորեն ուսումնասիրելով Հ. Էմինի կյանքն ու գործունեությունը, ուշադրություն է դարձրել այդ տեղեկությանը, լրացնելով այն այլ նյութերով։ Նրան ես հայտնի է, որ այդ թվականներին նամակագրություն է եղել Էմինի հետ և ռուսական իշխանությունների առաջարկությամբ վերջինս հրավիրված է եղել Ռուսաստան՝ մասնակցելու նախապատրաստվող ռազմական արշավանքին։

Հայտնի է, որ XVIII դարի 70-ական թթ. վերջերին Պետերբուրգում ծրագրեր էին մշակվում գրավելու Անդրկովկասը և ստեղծելու Ռուսաստանից կախյալ վրացական ու հարկական պետություններ։ Իրանի դեմ նոր արշավանքի նախապատրաստության գործը հանձնարարված էր զորավար Ա. Վ. Սուվորովին։ 1780 թ. Պետերբուրգում իշխան Գ. Ա. Պոտյոմկինը և

---

1 Ծանոթ՝ այնտեղ ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի Վիեննա, հատոր Բ, կազմեց Հ. Հայկազն Ոսկյան. Վիեննա, 1963, էջ 137—139։

2 Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, Հովսեփ Էմինի անգլերեն բնագրեն թարգմանեց՝ Հ. Եաշմանյան. Գեղարք, 1958, էջ 113։

3 Դիվան հայոց պատմության, գիրք Թ. Թիֆլիս, 1911, էջ 120։

Ա. Վ. Սուվորովը հանդիպումներ են ունենում Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի հետ։ Պատրաստվող արշավանքին մասնակից դարձնելու համար որոշվում է հրավիրել Հովսեփ Էմինին, որը Հայաստանի աղատագրման գործը կազմակերպելու նպատակով դեռևս քսան տարի առաջ եկել էր Ռուսաստան։ Գ. Ա. Պոտյոմկինի կարգադրությամբ Հ. Լազարյանը նամակ է գրում Նոր Ջուղա՝ Հ. Էմինին և նրան հրավիրում Ռուսաստան։

Այդ մասին Հ. Արղությանի հիշատակարանում գրված է հետևյալը. «Հրամայեաց և աղաչ Յովհաննէսին գրել ի Ջուղայ Էմին աղային, որ եկեսցէ։ Որ և գրեաց և զայն գիրն առաքեաց Հաշտարխանու գուբեռնաքին, որ նա յղեսցէ ի Ջուղայ առ նա, որ շուտով եկեսցէ»[4]։

Ա. Ռ. Հովհաննիսյանը Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում հայտնաբերել և հրատարակել է Հ. Արղությանի 2 մայիսի 1793 թվակիր նամակը, հասցեագրված Պլատոն Զուբովին, որի մեջ պատմվում է այդ հրավերի մասին։ Նա գրում է, որ երբ 1780 թ. Գ. Ա. Պոտյոմկինը հրամայել է Հ. Լազարյանին նամակ գրել Կալկաթա և Էմինին կանչել Ռուսաստան, լուր է տարածվում, թե իբր Էմինը մեռել է։ Սակայն դա ճիշտ չէր, Էմինը ողջ էր և տեղեկանալով հրավերի մասին, 1790 և 1791 թթ. գրել է իրեն՝ առաջարկելով իր ծառայությունները։ Նամակում նա նշել է, որ չնայած առաջացյալ տարիքի մեջ է, այնուամենայնիվ ուզում է գալ՝ իր հետ բերելով երկու որդիներին[5]։

Ա. Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ Հ. Լազարյանի նամակը չի հասել Էմինին։ Նա նկատում է, որ ըստ Արղությանի հիշատակարանի, Հ. Էմինին հասցեագրված նամակն ուղարկվել է Նոր Ջուղա, իսկ ըստ Պ. Զուբովին ուղղված նամակի՝ Կալկաթա։ Ստանալով Էմինի մահվան մասին լուրը, Հ. Լազարյանն ու Հ. Արղությանը այլևս չեն փորձում գտնել նրան։ 10 տարի անց Էմինն ինչ-որ ձևով իմանում է հրավերի մասին։ Եվ վաթսունհինգամյա ծերունին, ինչպես վերը նշվեց, իսկույն դիմում է Արղությանին և սիրով առաջարկում իր ծառայությունը ռուսական կառավարությանը[6]։

Վիեննայից բերած նամակները թույլ են տալիս ասելու, որ հրավերի մասին Էմինն իմացել է Հ. Արղությանի 1791 թ. ապրիլի 1-ին գրած նամակից։ Ինչ վերաբերում է Հ. Լազարյանի ուղարկած նամակին, ապա կարելի է ենթադրել, որ այն կորած է կամ էլ գնա չի հայտնաբերված։

Հ. Արղությանի նամակից տեղեկանում ենք, որ Էմինին նամակը հանձնել է Նոր Նախիջևանի քահանա տեր Ստեփանը (Ստեփաննոս Տեր-Հարությունյանը), որը Հնդկաստան էր մեկնել ավելի վաղ՝ 1786 թ.։ Իսկ թե ո՞վ էր նամակը հասցրել տեր Ստեփանին, հայտնի չէ։ Տեր Ստեփանը հանդիպել է Էմինի հետ Կալկաթայում 1791 թ. օգոստոսի 12-ին։ Պարզվում է, որ հինգ տարվա ընթացքում Հ. Արղությանին հասցեագրված Էմինի նամակներից արքեպիսկոպոսը ստացել էր միայն մեկը, գրված 1788 թ. հունվարի 10-ին։ Այն ժամանակ նամակները երբեմն դրում էին երկու կամ երեք օրինակից և ուղարկում տարբեր ճանապարհներով։ Այդ նամակը, ըստ Էմինի, գրվել է երեք օրինակից, բայց Հ. Արղությանը ստացել է երկու օրինակը, մեկն ուղարկված է եղել Նոր Ջուղայի վրայով, մյուսը՝ Եվրոպայի։ Դրանք Հ. Արղությանին են հասել 1791 թ. հունվարի 15-ին Ցաշ քաղաքում։ Հ. Արղությանը նամակագրության մեջ էր Մադրասում ապրող Շահամիր Շահամիրյանի, հայ աղատագրական շարժման ղեկավարներից մեկի հետ, և նամակները տեղ էին հասնում վեց ամսվա ընթացքում։ Պետերբուրգում Հ. Արղությանին հասցեագրված նամակները ստանում էր վերջինիս գործակալ (վեքիլ) Փիլիպպոս Մանուչարյանը և ուղարկում նրան, որտեղ էլ որ նա գտնվելիս լիներ։ Հ. Արղությանի խորհրդով Էմինն իր պատասխանը ծովային ճանապարհով էր ուղարկել Մադրաս՝ Շ. Շահամիրյանին, վերջինս էլ այն ուղարկել էր Պետերբուրգ։

Այժմ մի երկու խոսք հրատարակվող նամակների բովանդակության մասին։ Հ. Արղությանը հակիրճ կերպով Էմինին տեղյակ է պահել ռուս-թուրքական պատերազմի, դրա հետևանքով հայերի կրած նոր տառապանքների, նրանց իր ցույց տված օգնության, Նոր Նախի-

---

4 Նույն տեղում, էջ 24։

5 А. Р. Иоаннисян. Иосиф Эмин. Ереван, 1989, с. 256. Հարկ է նշել, որ Էմինը 1790 թ. Հ. Արղությանին նամակ չի գրել։ Նրա նամակը, ինչպես տեսանք, գրված է 1791 թ. դեկտեմբերի 24-ին։ Հ. Արղությանն, անտարակույս, տեղյակ է եղել այդ նամակի բովանդակությանը, որով Էմինը ցանկություն էր հայտնել գալու Ռուսաստան, ուստի գրում է երկու նամակի մասին՝ հատուկ չնշելով, որ նրանցից մեկը հասցեագրված է եղել Հ. Լազարյանին։

6 А. Р. Иоаннисян. Указ. соч., с. 256.

ցանում դպրոցներ ու տպարան հիմնադրելու վերաբերյալ։ Գրելով տարիներ առաջ Էմինին հրավիրելու իշխան Գ. Պատյոմկինի կարգադրության մասին, նա ընդգծում է այն, որ եթե ժամանակին նամակը տեղ հասներ և Էմինը գար Ռուսաստան, ապա «փրկություն էր լինելու մեր ազգին»։

Բնական է, որ նման լուրերի ստացումը մեծ հուզմունք պետք է պատճառեր հայրենի ժողովրդի ազատագրման ցավերով ապրող մեծ հայրենասերին։ Էմինը գրում է, որ ինքը արտասվել է նամակը ստանալու ժամանակ։ Նա խնդրում է այլևս տարիներով չսպասել նամակների փոխանակությանը, այլ իր նամակը թարգմանել տալ ռուսերեն (երկու տեղ էլ գրում է՝ ֆրանսերեն) և հանձնել ռուսաց թագուհուն, իշխան Պոտյոմկինին և այլ իշխանների ի հաստատումն այն բանի, որ ինքը պատրաստ է նորից գալ և ծառայել ազգին։ Նա գտնում է, որ մոտ է երեք գլխանի վիշապի, այսինքն՝ Թուրքիայի շախշախումը, միայն թե այդ գործում թագուհուն սրդելք են հանդիսանում Անգլիան և Պրուսիան։ Նա ուրախություն է հայանում ռուսական զենքի հաղողության համար, երանի տալիս Հ. Արղությանին, որ գտնվում է իշխանի բանակում։ Թեպետ ինքը ծերացած է, բայց պատրաստ է գալ և թափել իր արյունը հայրենի երկրի ազատագրության համար։ Նա վախ է հայտնում, որ կարող է մեռնել անկողնում և ոչ պատերազմի դաշտում։

Նույն հարցերն են շոշափված նաև Հ. Լազարյանին ուղղված նամակում։ Էմինն ուրախություն է հայտնում Պետերբուրգում հայկական եկեղեցու կառուցման, նոր նախիջևանում դպրոցներ ու տպարան հիմնադրելու կապակցությամբ։ Նա ցասում է հայտնում «ուսումն ու ռազմական դործը չսիրած «ուսումնատեաց» և «զինատեաց» մեր Հայրերի հասցեին։ «Այն է միայն գործ ազնիւ,—գրում է նա,—որ տայ և լուսաւոր առնէ դիտաւարեալ մառախլապատ միտս ազգիս։ Ինքը երկու թե երեք անդամ նամակ է դրել նրան՝ հայտնելով Ռուսաստան մեկնելու և ռուսական ծառայության անցնելու իր պատրաստակամության մասին, սակայն մնացել է անպատասխան։ Նա լավ հասկանում է, որ մեր ժողովրդի բախտը կապված է մեծ տերությունների հետ և նրանք էլ օգտագործում են մեզ իրենց շահերին համեմատ։ Էմինը ցավով նշում է, որ նմանվում ենք օլիմպիական խաղի գնդակին, որին ոմանք լախտով են հարվածում, ոմանք՝ ոտքով, իսկ խաղի վերջում նրան մի խորշ են նետում, որպես անպետք իր, մինչև հաջորդ խաղը։ «Այսպէս անցանին կեանք մեր։ Վա՜յ է մեզ...»։

Ինչպես իր ինքնակենսագրության կամ այլևայլ անձանց ուղղած գրություններում, այնպես էլ այս նամակներում Էմինը հարազատ է իր գաղափարներին։ Ազատագրական պայքար սկսելու, ժողովրդին միասնարար մարտի հանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է լուսավորել նրան և միանգամայն ողջունելի են այդ ուղղությամբ կատարվող գործերը։

Նամակները շատ հետաքրքրական են և նոր նյութ կարող են տալ հայ ազատագրական շարժման այդ անխոնջ գործչի կյանքի ու գործունեության վերաբերյալ։

Հ. Լազարյանին ուղղված նամակի հետգրության մեջ Էմինը նրա ներողամտությունն է հայցում այն բանի համար, որ նեղություն է քաշելու ընթերցել «զբաղմասխալ թուղթս այս»։ Իսկապես, որոշ սխալներ կան կանոնավոր հայկական կրթություն չստացած և հայկական միջավայրից հեռու ապրող այդ գործչի նամակներում, կան նաև դժվար ընթերցվող կամ անհասկանալի մի քանի բառեր։ Հեղինակի սխալներին հավանաբար գումարվել են նաև ընդօրինակողի վրիպումները։ Նյութը հարազատ կերպով մատուցելու համար, նամակները տպված են անփոփոխ, առանց ուղղումների։ Նամակների վերծանման ժամանակ խորհուրդներով ինձ օգնել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, հմուտ ձեռագրագետ հայր Օգոստինոս վարդապետ Սեքուլյանը, որին հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը։

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

№ 1

Հովսեփ Արղության նամակը Հովսեփ Էմինին (1791 թ. 4 ապրիլի)

Օրինակ Թղթոյ սրբոյն Էջմիածնի ծայրագոյն նուիրակի Ռուսաց երկրի առաքելայշաւիղ առաջնորդի իշխանազնեայ տեառն Յովսէփայ սրբազնագունեղ արքեպիսկոպոսի, որ է պատասխան Թղթոյն Էմին Յովսէփայ Էմեանց ի Կալկաթայ, ընկալեալ ի Թուին 1791, յամսեանն օգտեմբերի 12։

Բարձր բարեծնունդ գերազնիւ էմին աղայ,
իմ վաղեմի հաւատարիմ բարեկամ։

Երկոքին ախորժ թուղթ ձեր գրեցեալն ի 1788 և ի յունվարի 10, մի օրինակ, մինն ի վերայ Եւրոպիու, իսկ միւսն ի վերայ Ջուղայու ի միասին յայսմ ամի ի յունվարի 15, ի յերկիրն մալդաւանացւոց և ի քաղաքն Եաշ մեծաւ պատուով ընկալաք, և բոլոր դիտմանցդ տեղեկացաք, և ի վերայ ցանկալի առողջութեան ձերոյ տեղեկացաք։ Ահա աստէն կամիմ զբստուգութիւն ի քէն գրեցեալ լրոցն պարզապէս և երկայնօրէն գրել վեհանձնութեան քում մինչև ցայժմ։

1780 թուոջն մեք ի Պետրբուրգ դիմեցաք վասն օժ[անդակ]ութեան ի յազնիւ աղայ Յովաննիսէն Եղիազարեան[1], կառուցեալ եկեղեցւոյն[2], անդէն գդաք զշնորհս ծանօթանալ ընդ մեզ իշխանին, որոյ անունն կոչի քնէաղ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտեմկին[3], նման որոյ ի յամենայն դարս ոչ է եղեալ, երեվելի ոք ի դրան ուրուք թագաւորի, մինչև ցայսօր ժամանակ բուռն զօրութեամբ, արդեամբ և բանիւ։ Եւ ի ձեռն շնորհաց սորա արժանաւորութիւն ընկալաք և մեծ կայսէրուհւոյ հանդէպն կալ և վայելել զմայրական ողորմութիւն նորա, և զզանազան ողորմութիւնս ընկալնուլ, եղելոցն Ղրիմու ազգին մերոյ, զորս բնակեցուցաք ի վերայ Դօն գետոյն հանդէպ Ազովու և զքաղաքն անուանեցաք երկրորդ և կամ Նոր Նախիջևան, որոյ հիմն մեծափառ կոնդակիւ արկաք, այժմ օրըստօրէ պայծառանան անդ ժողովուրդք մեր և զրօլոր զօրութիւն մեր ի գործ արկանեմք բարեկարգել զքաղաքն, պայծառացուցանել զժողովուրդն, և գմայլեցուցանել զհեռաւոր ազգս մեր՝ հաստատմամբ դպրոցաց և տպարանաց, որպէս և լսէք ի թղթոց և ի մէնջ առաքեցեալ տէր Ստեփան աւաք քահանայէն մեռմէ[4]։

Սոյն մեծ իշխանս, ունէլով գութ ի վերայ ազգիս մերոյ, ի նոյն 1780 թուին կամեցաւ զթևս տարածել ի վերայ Հայաստանեաց՝ ի փրկել զնոսա ի յանտանելի լծոյն, որում դու ցանկայիր։ Ի մէջ բանից ասացեալ նզև նմա ի մէնջ ևս ի ազնիւ աղայ Յովաննիսէն Եղիազարեան զքէն և զջանից քոց և այլն։ Նա իսկոյն խանդակաթ սիրով հրամայեաց աղայ Յովաննիսին գրել քեզ՝ շուտով գալ աստ, կարգել ի զօրսն և առաքել ի Հայաստան մեծ պատրաստութեամբ ենարալ Սուվորովին[5]։

Աղայ Յովհաննէսն զգիր իւր ըստ բարձրագոյն հրամանին նորին պայծառութեան գրեալ առաքեաց ի Հաշտարխան առ գուբեռնատորն, ձեռամբ Դիլանչեան աղայ Մինասին[6], զյատուկ սուրհանդակաւ առաքեսցէն ի Ջուղայ՝ հրաւիրել զքեզ։ Նոքա անտի գրեցին, թէ էմին աղայն ի Տէր է փոխեալ, զի չէ կենդանի։ Գիրն յետ էին դարձուցեալ։ Եղև մեծ իշխանին և մեզ սրտմութիւն մեծ վասն անբախտ վիճակի ազգին մերոյ։ Զկնի այնմ ի 1782[7] ամին կրկին նորոգեցաւ բանն և զՎիրս ի միաբանութիւն ընկալան, և ի Վրացն խնդիրք եղեն և բազում թղթոց երթևեկութիւն առ մէլիքսն և առ այլս, որոց արժանաւոր պատասխանսն ինչ ոչ ընկալան, և ի Վրացն զզուեցան, մոռէն զզօրս իւրեանց յետս կոչեցին ի յերկրէն Վրաց։ Յայսմ պատճառէ վնասեցան և երկուքին մէլիքքն մեր՝ որդիքն մէլրէք Ագսմայ և Յովսէփի, մէլիք Մէջլումն և Ապովն, և այժմ տարսդիր ի Գանջայ են, զի խանն նոցա խմացեալ զմիտս նոցա միանալ ընդ Ռուսաց, կամեցաւ սպանանել։ Նոքա ի Թիֆլիզ փախեան, ապա մինչև ցայժմ ոչ ի նոցանէ և ոչ այլոց օգնութիւն ոչ դգին։

Եւ մինչ այս բան նորոգեցաւ և մեք ի մէջ բանից էաք լուեալ մեր զսուտ գոլն մեռելութեան քո, գրեցաք ի Ջուղայ, զի յայտնեսցէն քեզ զվերոյ գրեցեալ դիտմունս, յայնժամ քոյ ի Հնդիկս գնացեալ գոլով, կրկին տրտմութիւն և տարակուսանք պաշարեաց մեզ։ Եթէ դու ի միջոցի այնմիկ լինիցէիր ի կողմունս այս, թարց իմիք երկբայութեան, փրկութիւն լինելոց էր ազգին մերոյ, առաջնորդութեամբ քով և խելամուտ հանճարովդ։ Յետ այսօրիկ բացաւ պատերազմն ընդդէմ թուրքաց, այս ամենայն ի մոռացումն եղև տուեալ և այժմ մեծալ սաստկութեամբ կան ընդդէմ թուրքացւ Վասն մեծի գթոյ իշ-

խանին, որ առ մեզ և առ ազգս մեր, ահա երեք ամ է, որ մեք ընդ ինքեան, ի մէջ զօրացն շրջիմք յամենայն ուրեք։

Առին զբաղում քաղաքս մինչև ի Թունայ[8] գեռն մեծ և յայս անցեալ դեկտեմբերի 11, մեծաւ պաշարամբ և սաստիկ արիւնահեղութեամբ ի մէջ հինդ ժամու առին զիմայէլ քաղաքն և զամենայն թուրքս ի սուր մաշեցին, անձինս ԼԲՌ (32 000) և զմնացեալսն գերեցին և զքաղաքն աւար առին։ Ընդ պաշարմանն և զազգս մեր կողոպտեցին զապօռս կոչեցեալ զազախքն[9]։

Մեք գնացեալ ի Փիլի և Իսմայէլ, սփոփեցաք զնոսա, զգերիսն ժողովեցաք և ամե[նե]ցուն հացի և հանդերձի բաւականութիւն ետուք՝ ըստ կարի մերում և յամենայն վիճակէ իմմէ։ Կարեկցութիւն խնդրեցաք վասն թշուառութեան Նոցա, և ի յա[յ]սմ փետրուարին ընդ մեծ իշխանին եկաք ի Պետրբոլք առ Բաղուհին[10] վասն տառապանաց ժողովրդեան մերոյ օգնութեան և այլ հարկաւորութեան ազգին մերոյ առ հասարակ, որ հասարակ հրովարտակ խնդրեմ վասն ազգին մերոյ ապ[ա]հովութեան։ Յոյս մեծ ունեմ, որ շնորհեսցէ, յայնժամ արշանիկ լինելոց են ազգ մեր ի յերկրի աստ։

Ապա յայսմ միջոցի տրտմութիւն իմն հանդիպեցաւ մեզ, որ աղայ Յովհաննիսի միակ որդի աղայ Յարութիւնն 22 ամեայ, յայսմ յունվարի 12 առ Տէր փոխեցաւ։ Տրտմալի սրտիւ զքեզ ողջոյնէ և խնդրէ զներումն, որ զպատասխան թղթոյ քոյ ոչ կարաց դրել ի թախծութենէ հոգւոյ իւրոյ։

Երկու հաղար թուման[ի][11] հանկուցեալ Գրիգոր Խալդարեանի[12] տպարանն առի և տարեալ հաստատեցի ի Նախիջևան՝ ի Նորաշէն սուրբ Խաչ վանքն իմ, ընդ նմին և մեծ դպրոցք շինեցի և շինեմ, որ զորբ մանկունս ազգիս մերոյ ընկալայց ի նոսա։ Տացից ուսումն ամենայն երեք լեզուաւ։ Լինի թէ սոքա ի ժամանակի իւրեանց, իմաստութեամբ իւրեանց կարիցէն օգնել տիրելի հայրենեացն մերոց։ Որոյ յաղագաւ ի Հնդիկս առաքեցի տէր Ստեփան սուրբ քահանայն մեր՝ օգնութիւն հայցել մեզ։ Աստուած լի արասցէ զժողովուրդսն Սուրաթու և Մադրասու։ Եւ ես աղայ Յովհաննէսն Գէրաքեան, որ կարեկից եղեն ինձ առատ տրօք ի պատիւ ազգին, և ես ի պատիւ աղայ Յովհաննէսին երկու դպրոց ի քաղաքին հաստատեցի յանուն նորա, և ի յիսմայէլու գհիսուն որք մանկունս ընկալայ ի ս[տ]ակի նորա անդ ուսանիլ և լինիլ յաւիտեան յիշատակ տանն Գէրաքեան[13]։

Եւ զբոլոր տպարանն ու զդպրոցն նուիրեցի լինիլ յիշատակ Հնդկաց երկրի ժողովրդեանն մերոյ։ Ըստ որում դոքա միայն գլուխ լցեալ բարի նախանձիւք ի պատիւ ազգին։ Զգովելի գործս դոցա ծանուցի իշխանին մեծի։ Յոյժ գոհունակ եղև։ Յուսամ, զի տէր Ստեփանն եկեալ իցէ յայդր և լուեալ իցես ի նմանէ վասն ամենից։ Մինչև ցեղն շնչոյս ողտարաստ եմ ծառայել սիրելի ազգին իմոյ և յուսամ, որ պտուղ աշխատանաց իմոց վայելեսցէն ի ժամանակի։

Յանցեալ հոգտեմբերի 5 զրեցի յայդր հասարակ կոնդակ և յատուկ թուղթ ստ դերապատուելի Խաչիկ Առաքելեանն[14] վասն գովելի գործոց նորին, զորս ի կազէթ զանազան ազգաց ընթերցան աստ իշխանքն ամենեքեան, և գովեցին զնովաւ զազգս մեր։ Որում օրհնութիւն մատուցանես յինեն ընդ ամենայն իշխանաց և հասարակ ժողովրդոց և բարեկամաց քոց։

Յատուկ օրհնութիւն տամ սիրական որդւոյն քում՝ Արշակայ[15]։ Եւ լուեալ էի, որ Վաղարշակ որդի ևս գոյ քեզ, զայնմանէ ոչինչ գրես։ Զոր ինչ ասացէն յառաջասցի, և ես գրեցից քեզ։ Իմ գիրս առ Շամիրսամ աղայն[16] առաքեմ միշտ։ Վեց ամսէ վեց ամիս միշտ գիր ընկալնում ի նմանէ։

Աստ ի Պետրբոլք ինձ վաքիլ եմ կարգեալ ազնիւ պարոն Փիլիպպոս Մանիշարեան[17], որ ի Հնդկաց որ ինչ գիր և բան առ նա եկեսցէ, ուր և իցեմ մեզ հասուցցէ։ Այսպէս առնէ զգիրս Շամիրամ աղայի։ Դու ևս ըստ այսմ կարես առնել։

Խաղաղութեան դէռ նշոյլ չկայ։ Բոռոն[18] խալբալ է, զի ընդէմ է սոցա, ուր եզերիլն գրեցից։ Մեք լինելոց եմք ընդ զօրս սոցա ընդ մեծ իշխանին։ Եւ այլն, յանձնելով զձեզ ի շնորհն աստուծոյ։

Մնամ վասն ձեր միշտ աղօթարար Խոնարհ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսաց երկրի Հայոցս ազգին:

1791 ապրիլ 4
Ի Պետերբուրգ Կայսերական Քաղաքի:

1791 օգտեմբերի 12 էհաս և յանձնեալ եղև ի նորին նուիրակ հնարագետ և խորխորին գիտող խոհեմ տէր Ստեփան աւագ քահանայէ։

Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան,
ձեռ. № 694, փաստաթուղթ ժէ19։

№ 2

Հովսեփ Էմինի նամակը Հովսեփ Արղությանին (1792 թ. 1 նոյեմբերի)

Սրբոյ աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն նուիրակի Ռուսաց երկրի և կամ հիւսիսային կողմանս եղեալ ազգին Հայոց առաքելաշաւիղ առաջնորդի՝ Երկայնաբազուկ վեհանձին Արղութեանց իշխանեայ տեառն Յովսէփայ սրբազնագունեդ արքեպիսկոպոսին։

Համբուրմամբ աստուածարեալ աջոյ ողջոյն խոնհարական և սէր ըղձեալ նուիրեալ ձօնեմ ձերումդ գերապայծառութեան։

Արդ, զկնի մերձ հինգ ամաց յոյժ տարփանօք հազիւ թէ արժանացաք ընկալնուլ զսիրայորդոր պատասխան, երեք երկայնաձիգ ի մի օրինակ գրեցեալ թղթոյն մերոց, որ գրեալ էիր ի յապրիլի չորս, և ի չորեքտասաներորդ յաւուրն նոյեմբերի եկաւ ատտ առ մեզ, որոյ վերայ յոյժ բախճացաք և ի սաստկութենէ բերկրանաց սրտիս արտասուս հեղիւր ի յաչաց իմոց։ Ապա յայնժամ բացեալ իմ զպանծալի նամակ տենչալոյդ, ընթերցայ զամենայն և բարեպէս տեղեկացայ համբամանացն համայնիդ, որք էին ի նա։ Նախապէս զողջ կեցութեանդ տեղեկացեալ խնդացաք, և վասն սնդուլ ջանիցդ և անտանելի զանձկութեանդ, զորս կրես վասն ազգիդ, սքանչացաք, իբրև զհովիւն քաջ զանձնդ գնես ի վերայ ոչխարաց տածես և բնակեցուցանես զնոսա ի վայրի դալարուոջ և առ ջուրս հանգստեան սնուցանես զնոսա։

Արդարև մեծ իմն տեսանի ի դարիս այսմիկ, այսպիսի նշան հաշտութեան տեառն, որ առ ազգդ Հայոց՝ ի պանդուխտ և յօտար աշխարհիդ այդմիկ, նաև ի մէջ կրօնաւորաց Հայաստանեայց աշխարհիս ոչ ոք նմանեցաւ քեզ՝ բարի նախանձիւք լցեալ գոլ վասն հայրենեաց։ Քանզի իբրև լուայ զտառապանս ազգիդ ի հեռաստանէ, որք ի վիշտս և ի նեղութիւնս էին՝ ի բացատ վայրաց ոստեար ի տեղւոջէդ և սլացար իբրև զարծիւ և հասեր ի թիկունս նոցա, և ջանացար միխիթարել և սփոփել զնոսա։

Այլև հաւաստի տեսանեմք զետեղուլ կամիս ի միտս դոցին գիտութիւն թնչ՝ առ ի լուսաւորութիւն մթացեալ մտաց իւրեանց և հաստատել դպրոցս ի Նոր Նախիջևան քաղաքումդ, որ է ի վերայ Դօն գետոյն, զորոյ իմն գերապանծ տէրութիւն ձեր կամի արկանել ի վերայ անշարժ վիմին, որ զդրունս դժոխոց զնա մի յազթայարեսցէ։ Իսկ տրիտուրն այն լիցի քեզ, որ զանուն տէրութեանդ համբաւեսցի ընդ ամենայն ծագս երկրի և յաւիտենից մինչև ի յաւիտեանս բարի յիշատակ լիցի քեզ։

Դարձեալ ցաւիմ ի սրտէ վասն ղիպելոյն մերոյ սգոյ և տրտմութեան յաղագս մահուան միակ որդոյն իշխան աղայ Յովհաննէս Աղազարեանին, յորմէ դու իսկ գրես ի նաղելի քումդ նամակի։ Արդ, զինչ առաւել կարեմք գործել, բայց միայն փառս տալով արարչին ասել այսպէս. տէր ետ և տէր էառ, և կամք նորին լիցի օրհնեալ։ Նուաստս մեղադրանաց արժան եմ վասն ոչ ազդելոյն իմոյ զգերամեծար տէրութիւնդ առ ի տալ թարգմանել զծրեալ տոմսակն իմ ի բարբառս ռուստաց, եթէ զայն ինքն իսկ արարեալ իցէիր և մատուցեալ քրիստոսասէրակ թագաւորոյն մեծի ի յնթեռնուլ, կամ նորին

բարձրութիւն քնեազ Գրիգոր Ալէք[ս]անդրովիչ Պօտէմկինին և կամ այլոց կուսակալ իշխանաց նորին վերամբարձ տէրութեան, գրեթէ աներկբայ իսկոյն գրէին կամ հրամայէին զքեզ գրել վասն դիմելոյն իմոյ դէպ ի յայդր՝ թարց իմիք յապաղելոյ։ Իսկ այժմս ոչ լինէր մեզ վերստին սպասել իբրև ամս երկուս, ակնարկելով ի յարևելից մինչև ի մուտս արևու, առ ի գտանել դնորոգ պատասխան ի ձէնջ։ Մի՞թէ տէրութիւն ձեր ոչ է հմուտ, որ առն ծերացելոյ օր մի իբրև զտարի երկար թուի, նաև զբարի խորհուրդ նորին, որ է յօգուտ ազգին, առաւել յառաջանայ ի ժամանակ պատերազմի, քան թէ ի խաղաղութեան, որպէս ինքդ իսկ ըղձաւ, զի լիցի այդպէս։

Արդ, որովհետև մերձ է ջախջախումն գլխոյ երեքդլխեան վիշապին՝ ամենազօր բազկաւ տեառն, ի սաւառմամբ և սլացմամբ չորեքթևեան արծուոյն, նմին իրի պարտէ և ազգին Հայոց, միով կերպիւ ի միւս կողմանէ լատիւ հարկանել և խորտակել զսնակուշտս նորին, որ իսպառ սատակեսցի և ամենևին բարձցէ յերկրէ զյիշատակս նորին։ Ահա զինչ արասցուք, որ այն երկու օրհնեալ տէրութիւնքն քրիստոնէյից, որ է Ինկլիզն և Պռուսն, ոչ թողուն ողորմած թագուհւոյն յառաջիլ ի գործս իւր։ Նաև կամին զպատերազմ գոգռել ընդդէմ նմա։ Վասն որոյ ցաւիմ ի սրտէ, որ ոչ կարեմ գտանել զելս, զի եկից այդր և ծառայեցից ազգիս ի փառս Յիսուսի, որոյ գինեմք պատուական արեան նորին (Ս. Եսայեայ, 53,5), որ նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոյ և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց, ի դատ խաղաղութեան մերոյ ի նմայ և նորա վիրօքն բժշկեցաք»։

Զմեկնութիւն բանիս այսմիկ զիս ոչ է անկ առ ի գրել, քանզի աստուածաբանից է տուեալ զայն գիտութիւն և ազատութիւն առ ի կարօղանալ ձեռնամուխ լինիլ գործոյն այսմիկ և խաղաղութիւն քարոզել ի մէջ Աստուծոյ և մարդկան։ Իսկ ես, որ մէն մի աշխարհական գոլով, անձամբ անձին եթէ ոչ յանձն առնուցում զմահ վասն անմահին, որ մեռաւ յաղագս իմ, իսկ և յաղագս բազմաց, զիա՞րդ կամիւ իւիք կարեմք կոչիլ քրիստոնեայս, արդէն ջանասցուք կերպիւ իւիք ազատիլ ի հպատակութենէ այլագեաց և անօրէն րոնաւորաց, կամ մեռցուք արիաբար վասն անուան փրկչին մերոյ և կամ յաջողեսցի մեզ Աստուած ի յառաջադիմութիւնս մեր, կեցցուք և փառաւոր արասցուք զանուն սուրբ նորա։ Բայց ես նմանիլ և հաւասարիլ ոչ կամիմ կանացի արանց, որք ճոխացեալ են ընչիւք և ստացուածովք, և ոչ այնց, որք ցրուեալք կան ընդ ամենայն երկիր իբրև զոչխար թարց հովուի, որ օր աւուր լքանին և նուազին՝ ոմն ցաւոք և ոմն հեծութեամբ, ոմն ի խորոց սրտի հոգւոց հանելով յաղագս վշտին, և ոմն անարգեալ և այլ ազգէ գառնութեանց հանդիպեալ, եղծանին և նանրանան։ Վասն որոյ եթէ ոչ տեառն արկեալ իցէր ի սիրտ գթածառատ տէրութեանդ վասն նպաստամատոյց լինելոյ ազգիդ և ազատելոյ նոսա ի տառապանաց անտի իւրեանց, որ ի Ղռիմ, ի յՕզօ, ի յԻմայէլ և ի Քիլիայ, և կամ այլ ուրեք, վա՜յ լինէր կենաց նոցին, ըստ որում ասէ (Սաղմոս 11,5) «վասն տառապանաց աղքատին և հեծութեան տնանկին, այժմ յարեայց ասէ տէր, եդից զփրկութիւն իմ և համարձակեցայց ի նոսա»։ Որ և գերապայծառութիւնդ ոչ խնայեցէր ցանձդ տալոյ ի մէջ փորձանաց և վտանգից վասն ազգիդ և ի բաց թողեր զամենայն ախորժ կենցաղավարութիւնս ի Հաջի Բարխան քաղաքուց զխնճոյս և զցնծութիւնս զհամադամ կերակուրս, զսնուշահամ գինիս և զպէտպէս քաղցրառենիս, այլ ընտրեցէր ի վիշտս և ի նեղութիւնս լինիլ վասն ազգիդ, քան թէ ի խաղաղութեան և յանդորրութեան, յաղագս անուան նորին բարձրելոյ, որոյ հաւատարիմ պաշտօնեայ կարգեցար և նախնի սրբոց հարցն մերոց նմանեցար։

Զափազանց ուրախ եմ առ ի լսել զլուր յաղթութեան քրիստոնէից ընդդէմ թշնամեաց խաչի Քրիստոսի։ Երանի թէ մարմնոյ աչօք տեսանէաք իսպառ սպառ կորնչումն նեռնասարաս տէրութեան նոցին։ Որպէս լսեմք աստ ի հեռուստ։

Նա ևս հազար անգամ երանի գերամեծար տէրութեանդ, որ շնորհիւ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պօտէմկինին, արժանաւորութիւն ես ստացեալ

հանդէպս կաղ և վայելել զմայրական ողորմութիւն մեծի կայսերուհւոյն։ Այլ զանազան խնամս, զոր ածէ ի վերայ մերազնեայց, որք են ի կողմանդ այդմիկ, լուեալ մեր յոյժ զուարճացաք, իսկ և ակն ունիմք մինչև զբազուկ իւր տարածեսցէ առ բոլոր Հայաստան։

Դարձեալ կրկնապատիկ երանի բազմաշխատ տէրութեանդ, որ բանակակից ես ընդ մեծ իշխանին և աղօթող ըստ մեծի Ներսիսին, որ ի հնումն ժամանակի։ Բայց վասն տարաբախտ վիճակին խմոյ, որ ոչ եղէ արժանի հաղորդիլ ընդ նմա առ ի կրել զվտանգս պատերազմաց, զորս տէրութիւնդ կրէ, ըստ ասութեան, ուր ոչ գոյ վտանգ մահու, անդ և ոչ դոյ փառք և պատիւ։ Խոնհարական ողջոյն իմ մատուսցիր նմա և ղշնհորակալութիւնս վասն խանդակաթ սիրոյ իւրոյ, որ առ հայս, մանաւանդ առ նուաստիս։ Զի որպէս էր ի նախկին գրեցեալ թղթոցս մերոց, թէ որ ոք միանգամ լիցի առաջնորդ այսմ բարւոյ՝ թէ ազնուական ոք իցէ և թէ իշխան, և թէ աղքատ ոք իցէ և թէ տնանկ, ես նուաստս ծառայ հաւատարիմ խոստովանեցայց զիս միշտ նորա, և աղօթող վասն նորա հանապազ։

Թէպէտ ծերացեալ իսկ եմ, սակայն յօժար եմ հեղուլ զարիւն իմ ի ներքոյ ոտից առն այնմիկ, որ կամիցի լինիլ հեղինակ այսմ բարի խորհրդոյս, զի մի ի մահէի մեռանիցիմ իբրև զփափկասուն կողածին, ըստ ասելոյ մեծի և քաջ սպարապետին հայոց Մանուէլին։ Ահա ասէ ի վերայ ազգիս Հայոց այսչափ վէրս ընկալեալ է իմ, այժմ ցաւ է ինձ, զի մեռանիմ ի մահէի և ոչ ի պատերազմի (Նոր պատմութիւն, հատ. Ա, ծանօթութիւն Բ. գրոց, երես էՃԽԴ)։ Ուստի վա՛յ է ինձ, զի ոչ նմին մարմնով վիրաւորեցայ, այլև հոգւով և մտօք։ Քանզի երևի ինձ զի քրմանաջան աշխատանք իմ երեսնամեայ ի դերև ելանին։ Որ նորոգ այսուհետև պարտիմք սպասել դարձեալ ամս ինչ ըստ բանի գերապայծառութեան քում, համապատասխանատուութիւնս առնել մինչև ցօրն ցայն, երբ գրեսցես նուաստիս, թէ սահ ժամ է և ժամանակ, եկ և եկ։

Սակայն ցաւիմ ի սրտէ և ոչ գիտեմ, թէ զինչ արարից վասն անդստին և բնական վաղարկութեան ազգիս Հայոց, գրեթէ յոյժ անագան լիցի մեզ, մինչև կարօղասցուք առ ի գլուխ տանիլ զայս գործ։ Եւ ջանք մեր իբրև զղօղանջումն ցնծղայից, որք ունայնս յարեն ի յունկս լսօղաց, և ծաղր և արհամարանք մարդկան, որք են ի յիւրաքանչիւր տեղեաց։ Զայս ամենայն առթեալ եղև ի սաստիկ արծաթասիրութենէ, որ յաւետ ժանկայարեալ և բթացեալ պահեմք զարկաթ, այսինքն զփափկակեցութիւն առաւել սիրեմք, քան զարիաբար վարումն կենաց։

Արդ, որպիսի է այս, զի ոչ ապատկառիմք երբէք, ըստ որում։ Մարդ ի պատուի էր և ոչ յիմացաւ հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա։ Յաւելեալ ասեմ, զի յօրէ յայնմանէ յորմէ հետէ յաւիտենական փառացն արժանի տէր և կայսրն մեծն Պետրոս, որ կամեցաւ յօժար սրտիւ պաշտպանել զփոքր մասն Հայաստանեայց, նաև յորժամ թուղթ կամ նամակ հղէր առ ընչին հարիւրապետացն Արցախու (կամ ուզբաշեանց) ինքնին ձեռամբ իւրով, խանդակաթ սիրով ստորագրէր զպատուական զանունն իւր, իբրև հասարակ ոմանց, նոյնպէս ողորմած թագուհիս այս ոչինչ պակաս երևի ի նմանէ խոնհարութեամբ։

Արդ, իսկ և յայնմ ժամանակի ոչ ոք գտաւ ի յազգէն մերմէ յորդորել զիւրայինս ի միաբանութիւն վասն ազնիւ գործոյս այսմիկ, որ էր օգուտ անձամբ իւրեանց, այլ ընտրեցին հանգոյն հրէից ի խաւարի տգիտութեան մնալ տեսլով։ Ահա ձեզ օրինակ՝ սուտ ճէնէրալ Աղազարն, յորժամ դարձ արար ի Կիլանայ և եկն ի յՈւռուսըստան, մեծն Պետրոս կամեցաւ կարգել զնա ի զօրս իբրև երեսուն հազարաց և առաքել ի Հայաստան։ Իսկ նորա պատասխանի արարեալ արքային այսպէս՝ չպատկառելով թէ ինքն վաճառական է և այլն։ Նմին իրի Իսրայէլ դեսպանն, որ առաքեցաւ ի Սպահան առ շահ Սուլթան Հուսէյն արքայն Պարսից, նա իսկ յորժամ եկն բազում պարգևօք, ասէ ցնա թագաւորն, թէ զի՞նչ տեսիր յաշխարհին Պարսից կամ զի՞նչ բերիր ի թագաւորէ անտի։ Պատասխանեաց Իսրայէլ, թէ քսան

հաղար թումանի ինչս գոհարեղէն ընծայս բերեալ է իմ վասն տէրութեանդ։ Դարձեալ եհարց ի նմանէ ասելով որպիսի՞ կամօք գտեր զհայս ի Շամախի և ի Շիրվան։ Առ որ պատասխանեաց դեսպանն այն ասելով, թէ ի մէջ տասն կամ չորեք տասան աւուրց մինչ դեռ անցանէաք անտի, ութեւտասան հազար դինաւորեալ հայս գումարեցան ի վերայ իմ, կարծելով թէ տէրութիւն ձեր առաքեալ է զիս իբրու գլխաւորս լինիլ նոցա։ Յաղագաս որոյ յոյժ ուրախացեալ, արքային ասաց ցտմարդի դեսպանին, ահա զոր ինչ բերեալ ես վասն իմ, այն իսկ քեզ լիցի, յաղագս ծախին քում, արդէն երթ և գնեայ քեզ, զոր ինչ կամիս, քանզի զկնի աւուրց քառասուն հազար զօրաց պետ եմ կարգեցեալ դքեզ երթալ ի Հայաստան։

Յայնժամ վատթարն այն իբրև զայս բան լուաւ, սկսաւ լալ և ասել, թէ ինքն վաճառականի որդի վաճառական է և անհնարին է նմա յանձն առնուլ այնպիսի գործ, զոր յառաջադրէ, ապա զայրացեալ յոյժ թագաւորին և ի սաստիկ ցասմանէ անտի, ոստեաւ ի տեղւոջէ իւրմէ և ել արտաքս վասն հանդուցանելոյ զսիրտ իւր ի ցանմխիթարութենէ անտի, որ ոչ գտաւ ոք ի մէջ այնքան հայոց արի և խոհեմ։ Զայս ամենայն համբաւս ընթերցեալ է մեր ի պատմութեան շահն Շահնադր բռնաւորին, արարեալ ի մստր Հանվէ յանդլիացւոյ[21]։

Այլև ի ժամանակի Պետրոս արքային հայք տասնապատիկ առաւելս էին, քան դայժմս, և մէլիքեանքն Ղարաբաղու բաւական շատացեալս էին զօրօք և բովանդակ Նախիջևան և Երևան լի էր հարուստ վաճառականօք, որովհետև յայնմ ժամանակի մէն մի այր իսկ ոչ երևեցաւ ի Հայաստան աշխարհի նախանձախնդիր ազգին, զի՞ արդ է կարելի, զի այժմս գտանիցի այնպիսի ոմն, որ հեղինակ լիցի զբարի դիտմանցս մերոց։ Ուրեմն անկէ և պատշաճ, զի ամենայն հայք, որք են ի կողմանդ այդմիկ միահաղուն ժողովեսցին և հաստատեսցեն զմանսար[21] և կնքեսցեն ամենեքեան և առաքեսցեն ի սուրբ էջմիածին առ սրբազան կաթուղիկոսն և խնդրեսցեն ի նմանէ, որ ինքն իսկ ձեռնադրեսցէ և կնքեսցէ հանդերձ ամենայն եպիսկոպոսօք իւրովք, որք են անդ, զի հրամանաւ ամենափայլ թագուհւոյն իւրեանց առաջնորդ կարգեսցեն զքնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտէմկինն։

Զայս ամենայն տեսեալ թագուհւոյն մեծի, յոյժ մեծաւ սիրով հաճեսցի, ապա թէ կարելի լիցի յայնժամ հայոց հեշտութեամբ ազատել և զերծանել ի լծոյ սնօրէն բռնաւորաց. «եթէ ոչ, բուաբադան օղուլ օլմաղ»[22]։ Այսինքն ի յապգէն հայոց ի մէջ հարիւր ամաց և ոչ գտանիցի այնպիսի ոմն, զի կարօղանայցէ ի մի վայր հաւաքել զժողովուրդս իւր, որպէս ասէ. «ուր ֆալլու հափսի րիր հալլուն»[23]։

Ահա վեց հարիւր և եօթանասուն ամք են, յորմէ հետէ իբրև զգերի հպատակ են եղեալ այլ և այլ ազգաց, և անդստին բնութիւնք նոցին այն են, որ առաւել օտարասէրս են, քան զիւրասէր, նմանին սկլաւոնացւոց կամ լիւրիկեցւոյ, որք յօժարին յաւետ ծառայել ալէնէտիկցւոց հնարագէտ ժողովրդապետական քաղաքացւոց, քան ունել ինքեանց կառավարող, առ այս դէպ է մեզ ի մտաւ ածել զբանն ի ճարտասանութեան հայր Ստեփաննոսին, էրես 505, յօդուած Դ։

Դիւրաւ յարին յօտար ազգս նուաստ և անշուք համարելով զազգս մեր, ուսաի և յոլովք ի տեղիս տեղիս ոչ ախորժեն հայ անուանել զանձինս։ Ահա պատճառ հիւանդութեան ազգին բարւոք ասաց և եթող ընթերցօղաց գտանել զնոսխայն[24], այն էր, զոր ի վերոյ համարձակեցայ խոնհարարար հարևանցիկ ոճիւ մատուցանել առաջի գերամեծար տէրութեանդ, յորմէ խնդրեմ ներումն սիրոյդ առանց ձանձրանալոյ։ Քանզի դու միայն կաս ի մէջ ամենայն հոգևորաց իբրև զհայր գթած, որ գալարի աղեօք և յաւէտ լսէ զձայն յառաջանաց որդւոց իւրոց։

Բազում բանս ունիմ ասելոյ, ընդ որ հոգիս յօժար է և մարմինս տկար, երանի թէ բաւականապէս հմուտ լինիցէի հայկական լեզուի, նման Աբբայանց միաբանից, ապա թէ յայնժամ կարօղանայի իսկապէս բացայայտել զխորհուրդս սրտի իմոյ, գո՞ւցէ թէ ճարակ ինչ լինիցէր և բուժիչ ախտացե-

լոսս. որ այսօր ծանրագին հիւանդութեամբ անկեալ թաւալիմք ի վերայ երեսաց երկրի, կամ իբրև զցորեան հնձեալ և այգի կթեալ և ճուռն թողեալ, ահա այն իսկ տեսանի հափշտակեալ այլևայլ ձեռօք, որպէս գերամեծար տէրութեանդ և յայտնի է։ Այսուհետև թողից ազդելն և շատացայց, զոր ինչ ասացի։

Նախասահմանիչն ամենայնի և ամենեցուն ի ժամուն, յորում ծնայ ես ի մօրէ, գրեաց զանուն իմ ի դպրութիւնս գործողաց և ոչ գրողաց, բայց վա՜յ է ինձ, որ ոչ ունիմ զժամանակս գործածելոյ, առթեալ և վաղարկեալ ի ձեռն օրհնեալ ազգին իմոյ։

Արշակ փոքրագոյ ծառայն ձեր շնհորակալութիւնս ձօնէ տէրութեանդ վասն հայրագոյթ սիրով յիշելոյն ձեր զնա, նաև խոնհարաբար ողջոյն առաքէ և համդերձ հարբ զողջկեցութիւն անձինդ ի տեառնէ ժտէ։ Իսկ զՎաղարշակ եղբայր նորին, զորմէ լուեալ ես, ոչ է Վաղարշակ, այլ Յովսէփ յորջորջի, ընդ մարբ և ընդ երկու քեռբ ի յողորմելի Ջուղայ տառապին ի ներ հարկապահանջութեան[25], եթէ ես ոչ էի յամեցեալ աստ ակնկալութեամբ ընկալնուլ զպատասխան ի ձէնջ, ի վաղուց հետէ գնացեալ էի ի յօգնութիւնս նոցա և ազատեալ ի վշտաց անտի իւրեանց, և բերել աստ ի ներքոյ յանդորր տէրութիւնս այսմիկ, և թէ նամակ ձեր կանուխ ժամանեալ իցէր, և կամ այլ ոք ոչ իցէր այնքան վաղարկեալ ի հասուցանելն ձեզ զթուղթ մեր, կերպիւ իւիք փրկութիւն լինէր նոցա կամ ելանէի աստի և գնայի ի Ջուղայ և անտի շուեալ իմ նօքօք դիմէի ի Յաշդարխան, և կամ այլ կողմն աշխարհիս, ուր ի խաղաղութեան և յանդորրութեան լիցի, ապա թէ յայնժամ ոչ լինէր մեզ այսքան զզուացուցիչ աշխատանք, նաև ոչ այսքան ցաւ և տրտմութիւն, յերբ լսեմք զկացութենէ նոցա, և զերկիրն այն, որ մերձ է լինիլ անմարդաբնակ, որոյ բնակիչքն գիշերափախ ելեալ անտի թափառին յամենայն տեղիս։

Այլև մխիթարութիւն իմն տաս մեզ ի հասարակութեան նամակիդ, որ առ մերազնեայս աստ ի Հնդիկս, յաղագս ծանօթ լինելոյն ձեր ընդ իշխանին Կիլանայ՝ ասելով եթէ նա պայազատեսցէ ի տեղի Եղբօր իւրում Աղա Մահմատ խան Ղաջար բռնաւորին ի Սպահան, այցելութիւն ինչ առնելոց է անդ բնակեալ Հայոց ազգին։

Դարձեալ եթէ Նաբուգոդոնոսոր յարիցէ և Բաբիլոն կրկին նորոգիցի, Ջուղայ ևս կարելի լիցի նորոգիլ։ Բայց զմնացուորդ ժողովուրդ շինին այնմիկ, որք աստ և անդ են, Աստուած հաստատ պահեսցէ զնոսա, որք միշտ արդեամբ օգնական և նպաստ լինին տէրութեանդ և առաւել աղայ Յովհաննէս Գարաքեանն։

Նաև խնդրեմ, զի ըստ խօստմանքում անպակաս արասցես մեզ զթուղթ օրհնութեանդ, մանաւանդ ընդ լրօք նորոգ զարգացեալ և զինուք զարդարեալ ազգին ռուսաց։ Յաւելեալ մաղթեմ ի տէրութենէդ, զի արժանի համարեսցես յիշել զհոգևոր գառինդ ի սուրբ յաղօթս քո առ տէր, զի նա է, որ հանէ զնոսա ի բանտէ նեղութենէ, նաև վերստին ջեռացուցանէ զզօրութիւն ոգւոցս մերոց, քաջալերել զմեզ և զձեզ՝ երկայնամիտ լինիլ... ըստ բանին սրբոյն Յակոբայ. «Երկայնամիտ լերուք եղբարք իմ մինչև ի գալուստն տեառն, ահա մշակ երկայնամտեալ սպասէ պտուղական պտղոյն երկրի, մինչև առցէ զկանուխ և զանագանն»։ Եւ կամ թէ օրինակ առնուլ մեզ զպատուիչ ազնիւ գազանի երկայնամտութեամբ շարժումն ի գործ և յաղթանակութիւն իւր, որ մինչ տեսանէ զփիղն, որ մեծագոյն է, քան զամենայն կենդանիս, ի սղագոյն յերկիւղէ անտի, ագամբ իբրև զմտրակ յարկանէ և բախէ զկողս իւր, ապա թէ շահատակեալ յարձակի ի վերայ յորսոյն։

Խաչիկ Առաքելեանն առ տէր է փոխեալ, և զողջոյն օրհնութեանդ, որ առ ժողովրդոցս աստի, որոյ վասն նոքա ի դարձին խոնհարաբար շնհորակալ եղեն։ Յաւել յայսմանէ կամ և մնամ հլու հպատակ և պատրաստական յամենայն ծառայութիւնս ձեր, համդերձ յարգասէան համբուրիւ աջոյ և հայցմամբ երկարութեան կենաց ի տեառնէ ընդ յամայր ամս առ ի պարծանս ազգիս։ Ամէն։

Համեմատ հրամանի տէրութեանդ թուղթս նաւեցի դէպ ի Մագրաս ի ձեռն Շամիրամ աղային, որ նա յայնմսնէ առաքեսցէ առ ձեզ։ Նոքն զունակ խնդրեմ ի սիրոյդ, զի կաթոգին ողջոյն սիրոյ իմոյ մատուցեսս անծանօթին իմոյ՝ Թարգէոս առտուածիմաստ վարդապետին, որոյ համբաւ հանճարոյ մինչև աստ տարածեալ է։ Յոյս մեծ ունիմ ի տեառնէ, որ զմինդ այդ ի յերկոտասան լրասցի։ Մանաւանդ ողջոյն ձօնեմ այլոց ամենեցուն, որք մտերմաբար ծառայեն տէրութեան քում։

Յաւելում ասել թախծագին դիմօք երեսանկեալ աղաչեմ, զի զթուղթս դայս նաև դայն, զոր յառաջնմէ գրեալն էի ի 1787 զկնի ընթեռնլոյդ և զհանդամանացն տեղեկանալոյդ հրաման արասցես, զի թարգմանիցեն ի ֆրանսիզայ լեզու, զի այլազգիք բազումք են այդր, տեսանիցեն և ընթերցեն։ Նաև մեծամեծք ռուստաց, որք հմուտ են լեզուին այն, հանդերձ թագուհեաւ, գրեթէ ի սիրտ զգալով, ծանիցեն և գթասցեն յիմանալ զցաւ և զհիւանդութիւն ազգին քոմ, մանաւանդ զմեզմ մտերմութիւն նոցին ապաւինեալ առ թագուհոյն մեծի և իշխանաց նորին։

Զի այսպէս արարեալ ձեր յայտնի տեսանես զքեզ առաւելեալ ի փառս և ի պատիւս, քան զոր ներկայ։ Յայնժամ դիւրաւ և կանուխ յառաջասցի, զոր ինչ խորհուրդ ի սրտի ունիս, առանց թոյլ տալոյ և վաղարկելոյ հաճեալ կատարեսցեն նոքա, վասն որոյ մաղթեմ ի հայրախնամ սիրոյդ, զի մի անտես աթասցես զմեզ ի գործոց մերոց և մի երբէք դիցես ի մտի փքացում իմն եղեալ լինէն, և փանաքի[26] հաղուեալ արհամարիցես, աւել հերիք։

Կրկին ողջ լեր ի փառս և ի պարծան մեր։

Ն[ուասս] ծ[առայ] է[մին] Յ[ովսէփ] էմինեանց

1792, յունվար մեկ։ Երկրորդ օրինակ։

Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան,
ձեռ. № 694, փաստաթուղթ ԺԹ։

№ 3

Հովսեփ էմինի նամակը և ճեռագրությունը Հովհաննես Լազարյանին (1791 թ. 24 դեկտեմբերի և 1792 թ. 1 հունվարի)

Ազնուական իշխանաց իշխան աղայ Յովաննէս Աղազարեանին,
խանդակաթ սիրով ողջոյն մատչի։

Ի մեծի և անհամար հարստութենէ քումէ և հոչակեալ ընդ
ամենայն տեղիս ի պայծառ և բարեբարոյ համբաւոյ քումէ
երկայնամիտ լեր ի յօգուտ տառապեալ ազգիդ խնայեալ, ողորմեալ նոցա առ ի լինիլ յիշատակ արձանագիր յաւիտեան։

Քանզի ի լսելն մեր վասն կառուցեալ եկեղեցոյ ի մեծահամբաւ իշխանութենէդ, որ ի Սանպետրոբօլք և օծմամբ սրբազան Յովսէփայ առաջնորդի, յոյժ ուրախացաք։ Առաւել ևս ուրախ լինէաք, եթէ գումարեալ և հաստատեալ իցէիք գունդ մի զօրաց յազգէս Հայոց, հրամանաւ ողորմած թագուհոյն հրովարտակ ընկալեալ և անդրէն սուրհանդակաւ յղեալ ի Ջուղայ, ուր էի յառաջն իբրև ամս ութ, յորմէ երկիցս կամ երիցս ծանարտակ[27] գրեցի առ ձերդ մեծաշուք իշխանութիւնս վասն չուելոյս առ այդր և առ ի ծառայութիւն նորին տլ ի յեղերակալ միահեծան տէրութեան, և ապայ ի վաղուց տեսանէիր զբոլոր Հայաստան ազատ ի ծառայութենէ, ըստ որում գրէ սրբազնագունեղ առաքելաշաւիղ ազնուական Յովսէփ եպիսկոպոս. «Եթէ դու ի միջոցի այնմիկ լինիցէիր ի կողմունս այս, թարց իմիք երկբայութեան փըրկութիւն լինելոց էր ազգին մերոյ։ Եւ այն, որ այսօր այսչափ ոչ զգայաք, որպէս այժմ զգամք վասն դիպմանցն պատահելոց, որ ոչ միայն քեզ եղև

այդ դառնութիւն, այլ ընդհանուր տառապեալ Հայաստանեա[յ]ցս։ Վասն որոյ ցաւակցիմ ընդ սիրոյդ և կսկծամ ի սրտէ, զի որ ոչ մեծութիւն ձեր և ոչ նուաստս իւիք կերպիւ կարեմք մխիթարել կամ սփոփել զմեզ, ուրեմն պարտիմք Աստուծով միայն մխիթարիլ, որ մխիթարէ զմեզ յամենայն նեղութենէ մերմէ։ Վասն զի ով էր, որ ծնաւ, որ ոչ մեռաւ (բաց երկու կամ երեք սրբոց)։ Ուրեմն ասասցուք կամք տեառն եղիցի օրհնեալ, նա ետ՝ նա էառ։ Փառք և պատիւ նմա յաւիտեան։

Դարձեալ ցաւիմ, զի ոչ կարեմ սովաւ միայն բաւարարիլ, առանց պարսաւելոյ բախտին զխոչնդակութիւն, որ ոչ թոյլ տա մեզ զաշս մեր բանալ և հայել զերեսս մարդկան։ Բայց յիմանի, թէ յիրաւամբ է, զոր ինչ առնէ նա ընդ մեզ նայելով ի մեր համառեալ տմարդի, կանացի և փափկասուն վարուց, որ սակաւ բանիւ թուլամամբ և սրտաբեկ լինիմք վասն լինելոյն մեր երկչոտք, ագահ և արծաթասէրք (ևս քան զմեզ աւելի ագահագոյն ուազգեստք), որ ըստ ողբոյն մեծին Մովսիսի Խորենացւոյն[28], աւել քան զյիսուն և եօթն տեսակ զանազան ախտիւք մոլեալ, զխառեաց պզերկք հեշասէրք և այլն։ Իսկ մեք, որ յայսպիսի կացութեան յարատեւեալք եմք, զի արդ է կարելի մեզ հաճոյ երևիլ առաջի Աստուծոյ կամ բախտին, որ միշտ տեսանեմք և ի յոլովիցս լսեմք, զի արի և վստահ արանց խնամէ նա զաջողութիւն, յաղթութիւն, ազատութիւն և ապա, անկասկած, տէրութիւն։ Որովհետև այս այսպէս է, զի Դի(ց)ուհին այն, որ առ վստահ և քաջաց խնամէ զաջողութիւն, ուրեմն տեղիք ոչ մեզ մեղադրել և դատապարտելոյ գնա։ Վասն այնորիկ պարտապան եմք, եթէ բանական իցեմք ամենայնի ի բաց թօթափել ի մէնջ զատելի (թ)շուառ տկարութիւնս մեր՝ համայնտեսել այնոցունց, որք ոչ խնայեն զանձինս իւրեանց առ ի տալ ազգի շարշարանաց կրել զվիշտս և հալածանս վասն հայրենեաց, կամ օգտի հասարակաց։ Բնաւին մոռանալով և ի միտ ոչ բերելով, թէ հարք մեր, որք անարիք գոլով մեռան և որդիք մեր կանուխ փոխեցան, եղբայրք մեր ոչ վասն հայրենեաց իւրեանց անկան ի պատերազմի, այլ մօլեալ սատակեցան անարժան յիշատակի։

Զայսոսիկ իսպառ ի մոռացումն տալով, ապայ թէ կարեմք այցելութեան ակն ունիլ ի նմանէ, որ մեռաւ վասն մեզ, և մեք ի դարձին պարտական եմք, զի մեռանիլ արիաբար վասն նորա։ Եթէ ոչ միայն կեամք, ըստ որում կեամք օրըստօրէ նուազիմք, որպէս նուազիմք։ Միշտ անարդ կշտամբեալ և արհամարհեալ ընդ ամենայն յերկրի և ընդ ամենայն տէրութեան ոչ աճեմք և ոչ բազմանամք յաղագս հրէյասարաս խստութեան զընդարոյս մերոմս բնութեանց։

Յետ այսր ամենայնի դէպ է ինձ ասելն. համանմանիմք գնդակի օլիմպիական խաղի, որ ի հնումն ժամանակի առ որ ոմն լախտիւ հարկանէ, ոմն ոտիւք աքացէ, իսկ ի վախճան խաղին, առեալ արկանեն ի խորշի միոջ իբրև անարդ և անպիտան իմն, մինչև ցնորոգումն կամ կրկնումն խաղին։ Որ նշանակէ դարձեալ դադումն ահարկու և սատակիչ պատերազմին, որ ի մէջ երկուց կամ երից տէրութեանց։ Ըստ նախնեաց առակին. «Ի մարտիլին ձին և ջորին, էշն ի կոխան ոտից արարին»։

Այսպէս անցանին կեանք մեր ի վերայ երկրի։ Վա՜յ է մեզ, զորն ասեմ, զորն խոստովանիմ, և վա՜յ մեծ է ինձ՝ նուաստիս, որ այսօր ի գեղջս այս ոչ գտանի ոք, զի կարասցէ ընթեռնուլ զթուղթս և գիտացէ զսիրտս։ Ահա այս հարէ առակ խաղն ընդ թուրքաց և հայ ռամկաց. «բիլանայ բիրդ էգինան, բիլմիանայ հակաց կա ասայ»[29]։

Ոչ գիտեմ առ ինչ վախճան դադարէր զկացութիւն Ղրիմու Հայոց, եթէ աղնուականութիւն ձեր ոչ էր դտեալ ներկայ ընդ Արդութեան երկրորդին Յովսէփայ վայելել զշնհորս և ողորմութիւն մեծի կայսերուհւոյն, գոնեայ իսպառ սպուռ կոխան ոտից լինէին նոքա։ Արդարև յիրաւի պարծիլ կարեմք առ ի գովելի ջանից ձերոց երկոցունց, և ևս արժանաւոր գովեստի մեծի, ձեռնահաս ու նպաստամատուց լինիլդ նմա երաշխաւոր վասն կարողացուցանիլոյ զնա առ ի հաստատել զապարան և զդպրատուն։ Այն է միայն գործ աղնիւ, որ տայ և լուսաւոր առնէ զխաւարեալ մառախլապատ միտս ազգիս։

Եւ յաւելում տալ զդրուատ նորին նուիրակ տէր Ստեփան աւաք քահանային, սա թէպէտ փոքրագոյն է անձամբ առ (մեկ բառ անընթեռնելի—Վ. Գ.) մարդկան, սակայն է զուտ և անխառնակ ոսկի, գրեթէ լի ամենայն առաքինութեամբ, հոգևոր և մարմնաւոր, զի ոչինչ կերպիւ նուազ առ ի լրումն տանիլ զինչ և իցէ գործ։ Ըստ այնմ. «անասին դեօր զգին ալ, զրաղին գեօրբէզին ալ»[30]։ Արդ, որովհետև սա այսչափ խոհեմ է և ճարտար, ապայ որչափ առաւել և առաքող սորին իցէ՝ հանճարեղ, իմաստուն և նախանձայուզ վասն հայրենեաց։

Ուստի յայտնի երևի զնշան ինչ հաշտութեան Տեառն, որ և նախագուշակութիւն ազատութեան ազգիս, իսկ յայնժամ կատարեալ լինիցի բանս այս, որ զգունդս հայոց զօրաց՝ հանգոյն դպրատան և տպարանի հաստատութիւն առցէ։ Ապայ քաջալերեալ մեր զմեզ ասասցուք՝ «ահա ժամ է և ժամանակ երգելոյ զերգն պատերազմական սափորովքն Գեդեհոնի։ Եւ երկրորդեցուք զրան հրեշտակին, թէ սուր Տեառն և Կատարինեայ, որոյ բազկաւ զօրութեան ակն ունիմք զերծանիլ ի ծառայութենէ։ Պատճառեալ ի վատթար բարուց ուսումնատեաց իսկ և դիմատեաց հաւուցն մերոց, որք ոչ եղէն ջանքոտ քեզ և Յովսէփայ մեծի՝ առ ի հաստատել զդպրոց և տպարանս, որպէս ի տէր հանկուցեալ կաթուղիկոսն, որ աւելի քան զութսուն հազար ռուբ տուեալ եղև նմա ի տէր փոխեցեալ Զակիկեանց Գրիգոր Միքայէլէն[31] նաև դրամօքն այնմիկ (բացի դրամոցն նուիրակութեան ընդհանուր Հայաստանեաց) զթըղթարան մի ոչ կարաց շինել և պահել ի հաստատութեան, որոյ պատճառն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ այն, զի անկայուն տկիզբն ունելով, այսինքն չունելով զտէրութիւն և սուր երկայրի ի ձեռին ի սուրբ էջմիածին, նմանեցաւ վարդոյ շրջապատեալ փշոք բազմօք և թիւնալի տատասկօք, որոյ վասն և ոչ հաստատի հիմնադրութիւն իրակութեան իմիք անդ[32]։

Եւ թէպէտ դպրատունն, ևս տպարանն յայդր օտար յերկրի և յանապատ վայրի է, սակայն ամենայնի ապահով և բացատ ի փորձանաց, իսկ և միամտապէս ի ներ յանդորր հպատակութեան մեծաշուք ողորմած և տիեզերական թագուհոյն մեծի, յորմէ երկնչին և սարսին տէրութիւնք երկրի։ Որ և իշխանութիւն ձեր հանդէպն կալով հանապազ նորին ամենամեծ տէրութեանն բարեխօսութեամբ ներկալացուցանել յարժամ զվիշտս և զտառապակրութիւնս ազգիս՝ առ ի քաղցր պահելոյ ողորմած և գթած սիրտ նորին ի վերայ ամենեցուն, ուստի փոխարէն բարերարութեանդ վարձահատուց լիցի քեզ Տէր և քոյանոցդ իտկ, և երկայնամեայ արասցէ ի օգնութիւն, ի փառս և ի պատիւ մեր։

Սրբազան Յովսէփ եպիսկոպոսն և Արղութեանց տոհմի Երկայնաբազուկ առաջնորդն ի քէնէ ողջոյն դրէ, վասն որոյ գոհունակեմ ի սիրոյդ, որ և զկնի հինդ երկայն ամաց հազիւ թէ պատասխանեաց երեք երկայնաձիգ ի մի օրինակ թղթոցս մերոց։ Ի տեղի ազդ առնելոյ մեզ զստոյգութիւն համբաւուց և լրոց վասն թագուհոյն մեծի ի խնդիր լինելն անարժանիս, միայն և եթ յոյժ ածէ զմեծութեանդ և քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչին խանդակաթ սիրով յիշատակելն ղիս, և ոչինչ բան ի կողմանէ գթածառատ կայսէրուհոյն, յորմէ սէրդ իսկ վկայ և ականջալուր էիր ի Մոսկով քաղաքոջ, ուր երիցս անգամ հրամանաւ նորին փրինս Գալիցինն[33] յորդոր և հրաւէր եղև ինձ, զի յօժարեցայց առնուլ պաշտօն երկրին Ռուսաց և այլն[34]։ Իսկ այժմս ոչ երբէք կարևոր լինի յինէն համոզել յանձն առնուլ առանց նորին հրամանի շարժիլ յայսմանէ և գալ յայդր։ Ուստի զշնորհն այն մեծ կախեալ կայ ի բարերարութենէ և իշխանութենէ քումմէ, զի միայն կարող ես, եթէ կամիցիս, յոյժ դիրաւ կատարել զխնդրուածս իմ և լինիլ առաջին և վերջին պատրաստ, այսինքրն պաշտպանիչ և պահպանիչ իմ յազգէ մինչև յազգ

Սրբազան յառաջնորդէն խնդրեալ եմ, ի քէնէ ևս խնդրեմ, որ իմոյս ամենայն թուղթք, որ առ նա կամ մեծութիւնդ թարգման տացէ ի ֆրանսասաց բարբառ, որ և ի յընթեռնուլն, եթէ շահաւէտ ոչ լինիցի, վնաս ևս ոչ ծագեսցի յայնմանէ, այլ կամք ձեր եղիցի։

Փոքրագոյն ծառայ և անծանոթ իշխանութեանդ Արշակ խոնհարաբար

աղջոյն ուղերձէ, հանդերձ հարբ առ ձեզ, նմին իրի ողջոյն հնազանդական իշխանաւհի և մեծապատիւ ամուսնոյդ նուիրէ, և առողջութիւն անձանցդ ի տեառնէ ժտէ, յուսալով միշտ երջանիկ և ուրախ լիջիք ի տէր առ ի փառս և ի պարծանս մեր։ Ամէն։

Ի Կալկաթայ 1791 դեկտեմբերի 24. Երկրորդ օրինակ

Նու[ատ] ծ[առայ] Էմին Յովսէփայ
Էմինեանց։

Մախթեմ ի վաղեմի բարեկամական սիրոյ քումմէ, զի մի տաղտկացեալ (մեկ բառ անընթեռնելի—Վ. Գ.) տասցիս ի յընթեռնուլ ձեր զբազմասխալ թուղթս այս, չհաշուելով փքացումն ինչ եղեալ յինէն, այլ զհաւելուած պարզամիտ անշիջանելի եռանդոտն սրտի։ Ըստ որում յաւելուած սրտի խօսի զլեզու։ Ահա աստէն ի կարծիս անկեալ ասասցես՝ զի՞նչ կամի այրս այս յինէն, և ժպտալով թէ ոչ դադարի զճառատանս գրելով առ իս, ըստ ասելոյ Կոռնէլիոս Կաղղոսին, զորս տեսանի ի ճարտասանութեան հայր Ստեփաննոսին։

Վաստակ լինի ոմանն դիրքն ի լսել.
Ոչ վաստակի՝ քաջ ծերունին ի խօսել,
Ո՞վ ծերունի, յամենայնի ապիկար,
Ի ճառատանս միայն յաջող և յօժար։

Պատասխանեմ և ընդունեմ զթերութիւնս այս, որ յիս սակայն փորձեայ մի անդամ և փորձեսցէն այնք, որք այդպէս կարծէն, ստասչիր հրամայական, կնքեալ կնքով ամենափայլ կայսէրուհւոյն վասն իմ, թէպէտ վաթսուն և հինգ ամաց ծերացեալ այր մի եմ, բայց շնհորօք Տեառն մանկագոյն եմ, քան երիտասարդս։ Եթէ ոչ հաւասարիցի գործ իմ ասութեան իմոյ, ստայօդ յորջորջեսցէն զանուն իմ, և զբանն իմաստնոյն կատարեսցի ի վերայ իմ։ Ըստ հոգերդողին. «Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից զգործս Տեառն։

Ի թուին 1792 յամսեան յունվարի մեկ

Ն[ուատ] ծ[առայ] է[մին] Էմինեանց։

Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան,
ձեռ. № 694, փաստաթուղթ ԺԸ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հովհաննես Եղիազարյանը XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման ակտիվ մասնակից, ազգային բարերար Հովհաննես Աղաղարի լազարյանն էր (1735—1801 թթ.)։

2. Հ. Լազարյանի միջոցներով Պետերբուրգում, Նևսկի պռոստայի վրա կառուցված հայկական Ս. Կատարինե եկեղեցին օծվել է ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի ձեռքով 1780 թ. փետրվարի 18-ին։

3. Այս նամակը դեռ էմինին չէր հասել, երբ 1791 թ. հոկտեմբերի 5-ին, Ցաշում, Թուրքերի հետ խաղաղ բանակցություններ վարելու ժամանակ, ծանր հիվանդանում և մեռնում է ռուս նշանավոր պետական ու ռազմական գործիչ, գեներալ-ֆելդմարշալ Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինը (ծնվ. 1739 թ.)։

4. Թիֆլիսեցի Ստեփան քահանան (Ստեփաննոս Տեր-Հարությունյանը) Նոր Նախիջևանի քահանաներից էր, որին նվիրակի հանգամանքով Հ. Արղությանը 1786 թ. ուղարկել էր Հընդկաստան։ Ըստ Հ. Աղզությանի հրահանգի, նա մեկնելու էր Կ. Պոլսի և Բասրայի վրայով

(«Դիվան հայոց պատմության» (ԴՀՊ), Թ, էջ 55) և վերադառնալու էր Անգլիայի վրայով (Ն. ա., էջ 97)։ Նվիրատրված արժեքները, ըստ նույն հրահանգի, նա Հնդկաստանից Անգլիայի վրայով ուղարկելու էր Պետերբուրգ՝ Փիլիպպոս Մանուչարյանին։ «Դիվանի» Թ գրքում հրատարակված են աբբ Ստեփանին հասցեագրված Հ. Արղությանի, ինչպես և նրա հաջորդի՝ Գրիգոր աբբեպիսկոպոսի նամակները։ Հնդկաստանում նա հանդիպել էր էմինի հետ և լավ տպավորություն թողել նրա վրա։ Վերադարձել է հավանորեն 1800 թ. (ԴՀՊ, Ե, Թիֆլիս, 1902, էջ 393)։

5. Խոսքը վերաբերում է ռուս նշանավոր զորավար Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովին (1729—1800 թթ.)։

6. Մինաս Ստեփանի Դիլանչյանը Աստրախանի մեծահարուստներից էր։ Նրա միջոցներով այդ քաղաքի հայկական գերեզմանատանը կառուցվել էր Ս. Հարության եկեղեցին, որն օծվել է Հ. արք. Արղությանի կողմից 1788 թ. նոյեմբերի 18-ին (Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ) ձեռ. № 9647, էջ 34ա)։ Մ. Դիլանչյանի կինը՝ Աննան, 1785 թ. ռուսերենից թարգմանել է իր միջոցներով Պետերբուրգում, Գրիգոր Խալդարյանի տպարանում, հրատարակել է ավել «Սկզբունք քաղաքական ուսմանց» դիրքը։

7. Սխալ է նշված թվականը։ Պետք է լինի՝ 1783, քանի որ խոսքը վերաբերում է Ռուսաստանի և Քարթլի-Կախեթի թագավորության միջև կնքված Գեորգիևսկի դաշնագրին։

8. Թունան Դանուբ գետն է։

9. Հ. Արղությանն իր նամակում չի նշում, որ Իզմայիլը գրավելու ժամանակ ռուսական զորքերը (դապորոժյան կազակները) ոչ միայն թալանել էին հայերին, այլև նրանցից սպանել 60 հոգու։ Հ. Արղությանն իր հիշատակարանի մեջ Իզմայիլի գրավման ժամանակ սպանված թուրքերի թիվը նշում է 21 000, իսկ գերի ընկածներինը՝ 8 000 հոգի (ՄՄ, ձեռ. № 9647, էջ 6ր)։ Ըստ նրա, Իզմայիլում ապրել են 1650 հայեր (322 տուն), (նույն տեղում, էջ 7ա)։

10. Խոսքը վերաբերում է ռուսաց Եկատերինա II կայսրուհուն (1729—1796 թթ.)։

11. Հ. Արղությանը հավանորեն տպարանը ղնել է ռուսական դրամով և էմինին ավելի հասկանալի դարձնելու համար արժեքը նշել թումաններով։ Մեկ թումանն այն ժամանակ հավասար էր մեկ ռուսական իմպերիալի կամ 15 թուրքական զուտուրի։ 2000 թումանը մեծ գումար էր (այն տարիներին, օրինակ, Սրևանում մեկ թումանով կարելի էր գնել մեկ գոմեշ), դրանից մի քանի տարի անց՝ 1795 թ., Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը, փրկելով էջմիածին Աղա Մահմադ շահի գորքերի ասպատակությունից, նրա եղբորը՝ Ալի Ղուլի խանին, որպես կաշառք, տվել էր 4000 թուման (ՄՄ, ձեռ. № 4331, էջ 484բ)։

12. Գրիգոր Խալդարյանը (մահացել է 1787 թ). մշակութային գործիչ էր, տպարանատեր, ծնվել է Նոր Ջուղայում։ Կրթությունը ստացել է Ռուսաստանում, հետո մեկնել է Հնդկաստան, որտեղից էլ՝ Անգլիա։ Այնտեղ տպարան է հիմնադրել և փոխադրել Ռուսաստան։ 1783 թ. ապրած Պետերբուրգում լույս է ընծայել պատմություններ, աղոթագրքեր, դասագրքեր, օրացույց և այլն (Գառնիկ Ստեփանյան. Կենսագրական բառարան. հ. Բ, Երևան, 1981, էջ 37)։

13. Հոհաննես Գերաբյանը հնդկահայ մեծահարուստներից էր, ազգային բարերար։ Ապրում էր Սուրաթ քաղաքում և ակտիվորեն մասնակցում հայ աղատագրական շարժմանը։ Նա նյութական օգնություն է ցույց տվել Նոր Նախիջևանի բնակիչներին։ Հ. Արղությանի կարգադրությամբ նրա անունը փորագրվել էր մարմարի վրա և փակցվել Նոր Նախիջևանի դպրոցի պատին (ԴՀՊ, Թ, էջ 120)։ 1795 թ. Հ. Գերաքյանը Հ. Արղությանին էր ուղարկել 4110 ռուբլի և հագուստեղեն (Ն. տ., էջ 183)։ Նրա նվիրաբերած միջոցներով Ղուկաս կաթողիկոսը 1785 թ. վերականգնել էր էջմիածնի մայր տաճարի չրջապատի սալահատակը (Հով. Շահխաթունյանց. Ստորոգություն կաթուղիկե էջմիածնի և հինգ գավառացն Արարատա, հ. 2, էջմիածին, 1842, էջ 36)։ Մահացած պետք է լինի մինչև 1798 թ., քանի որ այդ թվականին Ղուկաս կաթողիկոսը նրա մահվան կապակցությամբ ցավակցական նամակ է գրել դուստրերին (ԴՀՊ, Նոր շարք, Ա, Երևան, 1984, էջ 663)։

14. Խաչիկ Առաքելյանը հնդկահայ մեծահարուստ էր, բարերար։ Ծնվել է Նոր Ջուղայում, ապրել ու գործել Հնդկաստանում։ Նրա միջոցներով էջմիածնի Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանում 1779 թ. հրատարակվել է Սիմեոն Երևանցու «Պարտավճարը», 1785 թ.՝ «Ժամագիրքը» և 1787 թ.՝ Հովսեպոս Փլաբիոսի «Ցաղագս պատերազմին հրէից ընդ հռովմայեցիս» գրքերը։ Մահացել է 1785 թ. առաջ։

15. Արշակը էմինի ավագ որդին էր, որի հետ հայրը մեծ հույսեր էր կապել և ձգտում

էր նրան մասնակից դարձնել հայ ազատագրական պայքարին։ Բայց Արշակը մահացավ պատանի հասակում (А. Р. Иоаннисян. Иосиф Эмин. Ереван, 1945, с. 258).

16. Շամիրամ աղա—Շահամիրյան Սուլթանում Շահամիրյան (1723—1797 թթ.)։ XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման եռանդուն անդամներից մեկը, Մադրասի հայրենասիրական խմբակի ոգեշնչողն ու հիմնադիրը։

17. Փիլիպպոս Մանուչարյանը ջուղայեցի Աստվածատուրի որդին էր, որն իր եղբոր՝ Մարգարի հետ հաստատվել էր Պետերբուրգում և հիմնել մետաքսի ֆաբրիկա։ Մանուչարյան եղբայրները մշտապես գրագրություն ունեին հայոց կաթողիկոսի հետ և երբեմն արժեքավոր նվերներ էին ուղարկում նրան։ Հ. Արղությանի խնդրանքով 1780 թ. նոյեմբերի 21-ին Ղուկաս կաթողիկոսը նրանց տեղեկանք էր տվել ազնվական ծագում ունենալու մասին (ԴՀՊ, Դ, էջ 516—518)։ 1782 թ. օգոստոսի 23-ին նրանք գրավոր դիմել էին կաթողիկոսին և առաջարկել էջմիածնում ստեղծել դպրոց «Ըստ եւրոպական լեզուաց»։ Կաթողիկոսը պատասխանել է, թե դա անկարելի է. «Չի մեր լեզուաւ դպրատուն, զոր ունիմք ի սուրբ Աթոռոյս՝ հազիւ պահեմք հաստատուն» (ԴՀՊ, Դ, Թիֆլիս, 1899, էջ 482)։

18. Բոսոն Պրուսիան է։

19. Փաստաթղթերի վերջում (չորրորդ էջի վրա) նույն ձեռագրով գրված է. «Աղայ Դաւիթ, թուղթս այս տպել տացես և ընդ քեզ պահեսցես»։ Այլ ձեռագրով նույն էջի եզրին գրված է մանր տառերով. «Հանեալ ի դիւանէն 1919 մարտ... և նոյնն»։

20. Իսրայել Օրու և նրա գործունեության վերաբերյալ էմինի բացասական կարծիքը արդյունք է անգլիացի հեղինակ Ջոնաս Հենվեյի ճամփորդական նոթերի ազդեցության։ Վերջինս XVIII դարի 40-ական թթ. եղել է Իրանում և 1753 թ. հրատարակել իր ճանապարհորդության նկարագրությունը։ Ի դեմս հայ վաճառականների նա տեսնում էր Մերձավոր Արևելքում անգլիական առևտրական կապիտալի լուրջ մրցակիցների։ Այստեղից էլ գալիս է նրա հակակրանքը հայ վաճառականների և ռուսաց թագավորի կողմից Իրան ուղարկված Ի. Օրու նկատմամբ (А. Р. Иоаннисян. Указ. соч., с. 69): Էմինն անձամբ ծանոթ էր Ջ. Հենվեյի հետ և Լոնդոնում նրա օգնությամբ էր անձնագիր ստացել Ռուսաստան մեկնելու համար (Ն. տ. էջ 46)։

21. Մանսար—արաբերեն բառ է, նշանակում է հանրագիր, համախոսական նամակ։

22. Այս թուրքերեն ասացվածքը փոքր-ինչ աղավաղված է, մոտավոր թարգմանությունը կլինի՝ «Ջրից երեխա չի լինի»։

23. Թուրքերեն ասացվածքը աղավաղված է և չի թարգմանվում։

24. Նոսխայ—արաբերեն բառ է, նշանակում է դեղատոմս։

25. Էմինի կինը և զավակները ի վերջո կարողանում են հեռանալ նոր Ջուղայից և գնում են Կալկաթա՝ էմինի մոտ (А. Р. Иоаннисян. Указ. соч., с. 258):

26. Փանաքի—նշանակում է ընչին, նվաստ, խեղճ, հետին։

27. Ծանարտակ—ըստ Հր. Աճառյանի նշանակում է «համախոսական, բոլորի ստորագրությամբ մատուցված թուղթ կամ խնդիրք» (Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. Բ, Երևան, 1973, էջ 444)։ Այստեղ օգտագործված է եզակի թվով՝ նամակ կամ խնդրագիր։

28. Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» էմինի ամենասիրելի գրքերից մեկն էր։ Երբ նա առաջին անգամ մեկնում է Հայաստան և հյուրընկալվում Ծինիա գյուղում, հայ գյուղացիների մեջ ազատագրական պայքարի կոչ անելիս դիմում է Խորենացու պատմության օգնությանը, որը միշտ ուներ իր հետ (Հովսեփ էմինի կյանքն ու արկածները, էջ 156)։

29. Թարգմանությունն է՝ «Իմացողին մեկ ասա, չիմացողին հազար ասա»։

30. Թարգմանությունն է՝ «Մորը տես, աղջկան առ, նմուշը տես, կտորը առ»։

31. Ջաքիկենց Գրիգոր Միքայելը հնդկահայ մեծահարուստ էր, Մադրասի հայրենասիրական խմբակի անդամներից մեկը, որի անունն այն ժամանակ գրվում էր՝ «Իշխան Գրիգոր աղայ Ջուղայեցի Խոջամալեան, Ջաքիկենց կոչեալ»։ Նա մեծ ծառայություն ունի հայ ազատագրական գործի զարգացման ասպարեզում. նրա միջոցներով է էջմիածնում 1776 թ. ստեղծվել Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանը, իսկ 1774 թ.՝ թղթի գործարանը։ Գ. Խոջամալյանը պատրաստ էր մեծ գումարներ տրամադրել Հայաստանի ազատագրման գործը կազմակերպելու համար։

32. Էմինի տեղեկությունները թղթի գործարանի մասին ճիշտ չեն։ Գ. Խոջամալյանի նվիրաբերած գումարներով Սիմեոն Երևանցի կաթողիկոսը 1774 թ. էջմիածնում ֆրանսիացի վարպետների միջոցով հիմնադրել էր թղթի գործարան, որը գործել է նաև Ղուկաս կաթողի-

կոսի աթոռակալության սկզբնական տարիներին։ Բայց քանի որ այն կառուցված էր վանքի պարիսպներից դուրս, արշավանքների ժամանակ ավերվել էր և նրա մետառե գործիքները հափշտակվել էին (ԴՀՊ, Գ, Թիֆլիս, 1894, էջ ՃԿԶ—ՃԿԷ)։

33. Իշխան Ալեքսանդր Միխայլովիչ Գոլիցինը (1718—1783 թթ.) Ռուսաստանի դեսպանն էր Անգլիայում, որի հետ Էմինը ծանոթացել էր Լոնդոնում 1761 թ. և որից ստացել էր անձնագիր՝ Ռուսաստան մեկնելու համար։ Այդ անձնագիրը պահպանվել է Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիայի արխիվում և լույս է ընծայված Ա. Ս. Հովհաննիսյանի գրքում (տե՛ս Иосиф Эмин, с. 71)։ Հետագայում Ա. Մ. Գոլիցինը վերադառնում է Պետերբուրգ և ստանձնում վիցե կանցլերի պաշտոնը։

34. Ա. Մ. Գոլիցինը մի քանի անգամ էմինին առաջարկել է մանել ռուսական զինվորական ծառայության մեջ։ 1761 թ. սեպտեմբերի 1-ին Լոնդոնում Էմինը անգլերեն մի նամակ էր գրել Ա. Մ. Գոլիցինին և պատմել իր կյանքի ու ծրագրերի մասին։ Այդ նամակը մեծ տպավորություն էր թողել Գոլիցինի վրա, որը և այն ֆրանսերեն թարգմանությամբ ուղարկել էր կանցլեր Միխայիլ Իլլարիոնովիչ Վորոնցովին (1714—1767 թթ.), խնդրելով օգնել էմինին։ Գոլիցինը էմինին համարում էր արտակարգ մարդ։ Այդ նամակում նա գրել է. «Նրա քաջությունը, նրա հաղվագյուտ օժտվածությունը, ինչպես և ազնվությունը հայանի է այստեղ բոլորին և պնդում են, որ նա փորձ է ձեռք բերել ռազմական արվեստում»։ Նա նշում էր, որ էմինը կարող է ծառայել ռուսական կայսրությունը, առավել ևս, որ նա օգտակար տեղեկություններ ունի Օսմանյան կայսրության վերաբերյալ և իր համաերկրացիների մեջ ունի շատ համախոհներ։ Էմինի այդ հետաքրքրական նամակը, Գոլիցինի գրությունը և այլ նյութեր պատշաճ առաջաբանով և ծանոթագրություններով 1981 թ. հրապարակել է պատմաբան Ժ. Անանյանը (Ж. А. Ананян. Новые данные об Иосифе Эмине (Из истории армяно-русских отношений), «Историко-филологический журнал», 1981, № 2, с. 263—280).

НЕОПУБЛИКОВАННЫЕ ПИСЬМА ИОСИФА ЭМИНА И ИОСИФА АРГУТЯНА (1791—1792 гг.)

Доктор ист. наук В. Р. ГРИГОРЯН

Резюме

Впервые публикуются три письма, написанные в 1791—1792 гг. видными представителями армянского освободительного движения XVIII в. Иосифом Эмином и Иосифом Аргутяном (Аргутинским), копии которых находятся в библиотеке армянской конгрегации мхитаристов в Вене (рук. № 694). В 1780 г. в России готовился новый персидский поход. Подготовительные работы были поручены генералу А. В. Суворову. В начале января князь Г. А. Потемкин поручил И. Лазаряну пригласить И. Эмина в Россию для участия в походе. Но письмо И. Лазаряна было возвращено из Астрахани, ибо там распространились слухи о мнимой смерти адресата. И. Эмин находился в Калькутте, откуда письменно обратился к духовному предводителю армян России, архиепископу И. Аргутяну. Получив письмо Эмина, И. Аргутян 4 апреля 1791 г. сообщает ему о приглашении Г. Потемкина (док. № 1). В ответном письме Эмин заявляет, что несмотря на свой преклонный возраст (ему было 65 лет), он готов приехать и, если понадобится, отдать свою жизнь за освобождение родины (док. № 2). То же самое он повторяет в письме И. Лазаряну (док. № 3). В изданных письмах обсуждается много вопросов, интересовавших армянскую общественность того времени (русско-турецкая война, переселение армян в Россию, основание новых армянских поселений, создание армянских школ и типографии и т. п.). Верный своим идеалам, Эмин указывает, что для освобождения армянского народа от чужеземного ига одной из самых важных предпосылок должно быть просвещение народа, его готовность вести вооруженную борьбу.